



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության
հակակոռուպցիոն դատարան,
Նախագահող դատավոր՝ Տ. Դավթյան

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ հակակոռուպցիոն դատարան,
Նախագահող դատավոր՝ Ժ. Մելիքսեթյան

2024 թվական սեպտեմբերի 30-ին

քաղաք Երևանում

ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն
հանցագործությունների քննության դատական կազմը (այսուհետ նաև՝ Վճռաբեկ
դատարան),

նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝

Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆԻ
Ռ.ՄԻՒԹԱՐՅԱՆ

գրավոր ընթացակարգով քննության առնելով Գոռ Մանվելի Համբարձումյանի
վերաբերյալ ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի (այսուհետ նաև՝
Վերաքննիչ դատարան) 2024 թվականի ապրիլի 25-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր
դատախազ Ա. Վարդապետյանի հատուկ վերանայման բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Վարույթի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ հակակոռուպցիոն դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ 2024 թվականի մարտի 1-ի որոշմամբ մեղադրյալ Գ.Համբարձումյանի պաշտպան Գ. Մարգարյանի միջնորդությունը բավարարվել է, Գ. Համբարձումյանի նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ նաև՝ ՀՀ նախկին քրեական օրենսգիրք) 38-312.2-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

2. ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալ Կ.Սերոբյանի հատուկ վերանայման բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2024 թվականի ապրիլի 25-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի որոշումը թողել է անփոփոխ:

3. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Վարդապետյանը բերել է հատուկ վերանայման բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2024 թվականի մայիսի 29-ի որոշմամբ ընդունվել է վարույթ, և սահմանվել է դատական վարույթի իրականացման գրավոր ընթացակարգ:

Հատուկ վերանայման բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

4. Ըստ բողոքի հեղինակի՝ Վերաքննիչ դատարանի դատական ակտով թույլ է տրվել դատական սխալ՝ նյութական օրենքի խախտում, որն ազդել է վարույթի ելքի վրա:

Միաժամանակ, բողոքում բարձրացված հարցերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու համար:

4.1 Բողոք բերած անձը Վճռաբեկ դատարանի առջև բարձրացրել է հետևյալ իրավական հարցը. իրավաչափ են արդյոք Վերաքննիչ դատարանի հիմնավորումները՝ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքով

(այսուհետ նաև՝ ՀՀ գործող քրեական օրենսգիրք) նախատեսված ապօրինի վարձատրության առարկայի չափը սահմանված չլինելու վերաբերյալ:

Բողոքաբերը նշել է, որ ՀՀ գործող քրեական օրենսգրքով հանցագործությամբ պատճառված վնասի, այդ թվում՝ ապօրինի վարձատրություն տալու և ստանալու չափերը, բացառությամբ հատուկ մասում նախատեսված դեպքերի, տեղ են գտել ոչ թե կոնկրետ հոդվածներում, այլ ներառվել են ՀՀ գործող քրեական օրենսգրքի՝ հիմնական հասկացությունները սահմանող 3-րդ հոդվածում:

Ընդ որում, նախատեսվել են հստակ և կոնկրետ չափեր, որոնք վերաբերելի են քրեական օրենսգրքի հատուկ մասում տեղ գտած բոլոր հանցակազմերին, այդ թվում՝ ապօրինի վարձատրություն տալուն:

Բողոքաբերի համոզմամբ, ստորադաս դատարանները սխալ են մեկնաբանել ՀՀ գործող քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի կարգավորումները՝ անտեսելով քննարկվող նորմն այն ընդունող մարմնի կողմից հետապնդվող նպատակի համատեքստում մեկնաբանելու պահանջը:

4.2 Բողոքաբերի կողմից Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ են արդյոք ստորադաս դատարանների հետևությունները՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով Գ.Համբարձումյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ:

Բողոքաբերը փաստել է, որ Գ.Համբարձումյանի արարքի կատարման պահին գործող՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-312.2-րդ հոդվածի 2-րդ մասը նույն օրենսգրքի կարգավորումների համաձայն՝ հանդիսացել է միջին ծանրության հանցագործություն, որպիսի պայմաններում այդ արարքի համար Գ.Համբարձումյանին քրեական պատասխանատվությունից ազատելու վաղեմության ժամկետը եղել է հինգ տարի: Գ.Համբարձումյանի արարքը ներկայումս համապատասխանում է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 46-439-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետին, որը, նույն օրենսգրքի համաձայն, հանդիսանում է միջին ծանրության հանցանք, իսկ դրա վաղեմության ժամկետը, ՀՀ գործող քրեական օրենսգրքի 83-րդ հոդվածի համաձայն, տասը տարի է:

Բողոքաբերը, անդրադառնալով Գ.Համբարձումյանի արարքը ՀՀ գործող քրեական օրենսգրքի 46-439-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխանեցնելուն և

մինչև նույն ժամանակ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածով սահմանված վաղեմության ժամկետները կիրառելուն, փաստել է, որ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 8-րդ և 9-րդ հոդվածների դրույթների խախտմամբ դատարանները միաժամանակ կրկնակի հետադարձ ուժ են տվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի դրույթներին: Սույն դեպքում, եթե Գ.Համբարձումյանի արարքին տրվել է իրավական գնահատական ՀՀ գործող քրեական օրենսգրքի կարգավորումներով այն հաշվառմամբ, որ այդ օրենքը մեղմացնում է անձի պատիժը, ապա նրան քրեական պատասխանատվությունից ազատելու վաղեմության ժամկետները ևս պետք է հաշվարկվեն նույն օրենսգրքի դրույթներին համապատասխան:

5. Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2024 թվականի ապրիլի 25-ի որոշումը և կայացնել դրան փոխարինող դատական ակտ:

Հատուկ վերանայման բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

6. Գոռ Համբարձումյանին մեղադրանք է ներկայացվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 38-312.2-րդ հոդվածի 2-րդ մասով այն արարքի համար, որ. «*Մի 2022 թվականի փետրվարի 23-ին օժանդակել է իր ազգական Թաթույ Գևորգյանի կողմից ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի հետ միերիմ հարաբերությունների մեջ գրնվող Վիգեն Գրիգորյանին՝ վերջինիս իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու համար խոշոր չափերով ապօրինի վարձարրություն տալուն, որը դրսևորվել է հետևյալում:*

Այսպես.

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ՓԾ ՀԱԷԿ-ի պահպանության հատուկ հրշեջ ջոկարի օղակի հրամանատար Գոռ Համբարձումյանն, իր ազգական Թաթույ Գևորգյանից տեղեկանալով, որ վերջինս ցանկանում է ապօրինի վարձարրության դիմաց ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայությունում աշխատանքի ընդունվել, նրան այդ հարցում օժանդակելու դիտարկությամբ, նույն խնդրանքով ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ՓԾ ՀԱԷԿ-ի պահպանության հատուկ հրշեջ ջոկարի խմբի հրամանատար Արտակ Պետրիկի Բեյբությանի միջոցով դիմել է ՀՀ արտակարգ

իրավիճակների նախարարի հետ մերերիմ հարաբերությունների մեջ գրնվող Վիզեն Գրիգորյանին՝ նրան տրամադրելով տեղեկատվություն Թաթուլ Գևորգյանի մրադրության մասին: Վիզեն Գրիգորյանը, խոշոր չափերով ապօրինի վարձարրություն սրանալու դիմաց, խոստացել է իր իրական ազդեցությունն օգտագործելով նպասարել Թաթուլ Գևորգյանին ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայությունում աշխատանքի ընդունվելուն: Դրանից հետո, Վիզեն Գրիգորյանի ու Թաթուլ Գևորգյանի կողմից միմյանց չճանաչելու խոչընդոտը վերացնելու եղանակով Թաթուլ Գևորգյանին օժանդակելով Գոռ Համբարձումյանը կազմակերպել է նրանց ծանոթությունն ու հանդիպումը, ինչից հետո Թաթուլ Գևորգյանը պայմանավորվածություն է ձեռք բերել Վիզեն Գրիգորյանի հետ ապօրինի վարձարրության առարկան փոխանցելու մասին: Արդյունքում, Թաթուլ Գևորգյանը ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայությունում աշխատանքի ընդունվելու դիմաց Գոռ Համբարձումյանի ներկայությամբ՝ 2022 թվականի փետրվարի 23-ին՝ ժամը 17.45-ի սահմաններում, Էջմիածին համայնքի Զվարթնոց թաղամասի վարչական տարածքում գրնվող գազալցակայանի հարակից հարվածում իրեն պարկանող «Հյունդայի Սոնարա» մակնիշի 97 GG 100 հաշվառման համարանիշի ավտոմեքենայում Վիզեն Գրիգորյանին անձամբ տվել է խոշոր չափերով՝ 957.560 ՀՀ դրամին համարժեք 2.000 ԱՄՆ դոլլար գումարի տեսքով ապօրինի վարձարրություն (...):»¹:

7. Առաջին ատյանի դատարանի 2024 թվականի մարտի 1-ի որոշման համաձայն՝ «(...) ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի պահանջագրի համաձայն՝ Գոռ Համբարձումյանի վերաբերյալ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի օպերատիվ տեղեկատու քարտադարանում բացի սույն գործի տվյալներից՝ վերջինի դարապարտման, պարժի կրման, պարժից ազարման, հերախուզման մեջ գրնվելու, ինչպես նաև նրա նկարմամբ ներում շնորհելու կամ համաներում կիրառելու վերաբերյալ տեղեկություններ չկան:

Վերոգրյալ իրավական նորմերի և ՀՀ վճարել դարարանի արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Դարարանն փաստում է, որ սույն գործով Գոռ Համբարձումյանի նկարմամբ իրականացվող քրեական հերապնդումը

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 22:

դադարեցնելու հարցը լուծելիս ՀՀ քրեական օրենսգիրքն անձի վիճակը բարելավում է, իսկ ենթադրյալ արարքի կատարման պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված է, որ նմանատիպ նորմերը ևս ունեն հետադարձ ուժ, ուստի այն ունի հետադարձ ուժ և դրա՝ անձի վիճակը բարելավող դրույթները փարսավում են մինչև դրա ուժի մեջ մտնելը ենթադրաբար հանցանք կատարած Գոռ Համբարձումյանի նկատմամբ:

Տվյալ դեպքում տեղի է ունեցել նյութական օրենսդրության փոփոխություն, որը կիրառելի է սույն փաստական հանգամանքների նկատմամբ:

Այսպես՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգիրքը մեղսագրվող արարքի խոշոր չափ էր համարում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխարավարձի երկուհարյուրապարիկից հազարապարիկը չգերազանցող գումարը (արժեքը), իսկ առանձնապես խոշոր չափ՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխարավարձի հազարապարիկը գերազանցող գումարը (արժեքը):

2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետք նաև՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 3-րդ հոդվածի 3-րդ մասի 17-րդ կետի համաձայն՝ հափշտակության, պարճառած գույքային վնասի կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված կամ սրացված գույքի կամ օգուտի չափերը՝ սույն օրենսգրքում հափշտակված գույքի, պարճառված գույքային վնասի, հանցավոր ճանապարհով ձեռք բերված կամ սրացված գույքի կամ օգուտի մանր չափ է համարվում 500.000 Հայաստանի Հանրապետության դրամը չգերազանցող գումարը (արժեքը), խոշոր չափ է համարվում 5 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը չգերազանցող գումարը (արժեքը), առանձնապես խոշոր չափ է համարվում 5 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող գումարը (արժեքը), բացառությամբ սույն օրենսգրքի Հարուկ մասով նախատեսված դեպքերի:

Տվյալ դեպքում Գոռ Համբարձումյանին առաջադրվել է մեղադրանք 2.000 ԱՄՆ դոլարին համարժեք 957.560 ՀՀ դրամ ապօրինի վարձավրություն փայուն հանցակցելու համար, որը ենթադրաբար կատարվել է ՀՀ քրեական նախկին օրենսգրքի գործողության ժամանակ և համապատասխանել է խոշոր չափերով ապօրինի վարձավրություն փայուն:

Իրականացված օրենսդրական փոփոխությունների արդյունքում ՀՀ քրեական նոր օրենսգիրքը, ի տարբերություն կաշառք կամ ապօրինի վարձատրություն ստանալու չափերի, չի սահմանում դրանց տալու չափեր, քանի որ քրեական օրենսդրության մեջ նկարագրված են միայն հատկապես գույքի, պատճառված գույքային վնասի, հանցավոր ճանապարհով ձեռք բերված կամ սրացված գույքի կամ օգուտի չափերը, այլ ոչ թե դրանք տալու, փոխանցելու, հանձնելու, հերկարար՝ բացակայում է այն որակյալ դարձնող հանգամանքը և անձի արարքը ենթակա է վերատրակման ՀՀ քրեական օրենսգրքի 46-439-րդ հոդվածի 1-ին մասով:

Այլ կերպ ասած՝ գործող ՀՀ քրեական օրենսգրքի պայմաններում անկախ փոխանցված կամ տրված գումարի չափից, անձին չի կարող մեղադրանք առաջադրվել համապատասխան հոդվածի այն ծանրացնող կամ առավել ծանրացնող հանգամանքներով, որոնք կապված են չափերի հետ՝ խոշոր կամ առաձնապես խոշոր չափերով կարարված, քանի որ օրենսգիրքն այդ չափերը չի սահմանել, դրանց վերաբերյալ դրույթ չի նախատեսել, ուստի այլ ծանրացնող հանգամանքների բացակայության դեպքում, յուրաքանչյուր պարագայում ապօրինի վարձատրություն տալը պետք է որակվի որպես հասարակ հանցակազմով կարարված:

Սույն դեպքում, նկատի ունենալով, որ Գոռ Համբարձումյանին առաջադրված մեղադրանքը որակյալ դարձնող հանգամանք բացառապես հանդիսացել է գումարի չափը, որը ինչպես արդեն իսկ նշվել է ՀՀ քրեական օրենսգրքով որոշակիացված և նախատեսված չէ, որպես պարիժը մեղմացնող օրենք պետք է տալ հերադարձ ուժ և արձանագրել, որ վերջինի կարարած արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի օրենսգրքի 46-439-րդ հոդվածի 1-ին մասին:

Ուստի տեղի է ունեցել անձի վիճակը բարելավվող օրենսդրական փոփոխություն և վերջինի ենթադրարար կարարած արարքի իրավական գնահատականը որոշելիս կիրառելի է ոչ թե արարքի կարարման պահին գործող, այսինքն՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգիրքը, այլ 2021 թվականի մայիսի 25-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգիրքը:

Հերկարար՝ Գոռ Համբարձումյանին մեղսագրվող արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 46-439-րդ հոդվածի 1-ին մասին, որն,

ըստ բնույթի և հանրության համար վրանգավորության աստիճանի՝ դասվում է ոչ մեծ ծանրության հանցագործությունների շարքին:

Ելնելով վերոգրյալից՝ Գալարանը գտնում է, որ Գոռ Համբարձումյանին մեղաազրվող 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգիրքի 38-312.2-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքը համապատասխանում է քրեական օրենսգրքի 46-439-րդ հոդվածի 1-ին մասին:

Անդրադառնալով հանրային մեղադրողի այն դիրքորոշմանը, որ որպես սպորինի վարձատրություն փախու խոշոր և առանձնապես խոշոր չափ պետք է հիմք ընդունել ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով սահմանված չափերը, քանի որ դա բխում է քրեական օրենսգրքի նպատակից, սպա Գալարանը, ինչպես 2023 թվականի դեկտեմբերի 22-ին Տիգրան Գասպարյանի, 2024 թվականի հունվարի 26-ին Միհրդար Մաթևոսյանի և Գագիկ Պողոսյանի վերաբերյալ կայացված որոշումներով, այնպես էլ ներկայում գտնում է, որ նմանատիպ մեկնաբանումն ուղղակիորեն կհակասի ՀՀ քրեական օրենսգրքի սկզբունքներին:

Գալարանի դիրքորոշումը պայմանավորված է այն հանգամանքով, որ արարքի կատարման պահին գործող՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգիրքը սահմանում էր ինպերատիվ արգելք՝ քրեական օրենքն անսլոգիայով կիրառելու հարցում, մասնավորապես՝ նույն օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քրեական օրենքն անսլոգիայով կիրառելն արգելվում է:

Միաժամանակ, ՀՀ քրեական օրենսգրքի 4-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ քրեական օրենքի Հատուկ մասի նորմերն անսլոգիայով կիրառելն արգելվում է:

Քրեական օրենքի Ընդհանուր մասի նորմերը կարող են անսլոգիայով կիրառվել, եթե դա չի վարթարացնում անձի վիճակը:

Չնայած այն հանգամանքին, որ հանրային մեղադրողի նշած չափերը նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասում, սակայն դրանց կիրառումը վարթարացնում է անձի վիճակը, քանի որ այդ չափերը հիմք ընդունելու պայմաններում այն դեպքում, երբ դրանք նախատեսված չեն փախու, հանձնելու, անձի համար կնախատեսեն ավելի խիստ պատասխանատվություն, ուստի անսլոգիայի կիրառմամբ անձի վիճակն ինքնաբերական կվարթարացվի:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Գալարանը գրնում է, որ հանրային մեղադրողի դիրքորոշումն անընդունելի է և չի բխում ՀՀ քրեական օրենսգրքի դրույթներից, ավելին՝ հակասում է դրանց:

ՀՀ քրեական օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե ոչ մեծ ծանրության հանցանքն ավարտվելուն հաջորդող օրվանից անցել է 5 օրսի, իսկ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե ոչ մեծ ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել է 2 օրսի:

Վերոգրյալի արդյունքում Գալարանը գալիս է այն եզրահանգման, որ վաղեմության ժամկետի մասով կարարված օրենսդրական փոփոխությունները կիրառելի չեն Գոռ Համբարձումյանի նկատմամբ, քանի որ այդ փոփոխությունը չի բարելավում, ավելին՝ վարթարացնում է անձի իրավական վիճակը:

Գալարանի դիրքորոշումը պայմանավորված է այն հանգամանքով, որ կարարված օրենսդրական փոփոխությունները՝ վաղեմության ժամկետների հաշվարկման տեսանկյունից, վարթարացնում են անձի վիճակը, քանի որ արարքի կարարման պահին գործող, այսինքն՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքով, անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե ոչ մեծ ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել է 2 օրսի, իսկ նոր օրենսդրական փոփոխությունների արդյունքում նշված ժամկետն ավելացվել՝ խստացվել է՝ դառնալով 5 օրսի:

Գոռ Համբարձումյանն իրեն մեղաագրվող արարքը ենթադրաբար կարարել է 2022 թվականի փետրվարի 23-ին և այդ ժամանակ գործող օրենքն է հանդիսացել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքը, որից հետո՝ 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ է մտել նոր ՀՀ քրեական օրենսգրքը:

Հաշվի առնելով այն, որ արարքի հանցավորությունը և պարթելիությունը որոշվում են դա կարարելու ժամանակ գործող օրենքով, իսկ հետադարձության կանոններով նոր օրենսգրքը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ արարքի հանցավորությունը վերացնում է, պարթել մեղմացնում կամ հանցանք կարարած անձի վիճակն այլ կերպ բարելավվում է և նկարի ունենալով, որ ցվյալ պարագայում նոր օրենսդրությունը ոչ

միայն անձի վիճակը չի բարելավվում, այլ ընդհակառակը՝ վարթարացնում է, ուստի Գոռ Համբարձումյանի նկատմամբ վաղեմության ժամկետների հաշվարկման տեսանկյունից կիրառելի է արարքը կատարելու պահին գործող՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված քրեական օրենսգիրքը:

Դատարանը, հաշվի առնելով, որ բացակայում են վաղեմության ժամկետի կասեցման, ընդհատման հիմքերը և նկատի ունենալով, որ մեղադրյալ Գոռ Համբարձումյանին մեղաազրվող ոչ մեծ ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից (ենթադրաբար կատարվել է 2022 թվականի փետրվարի 23-ին) անցել է 2 տարի, գրնում է, որ թիվ ՀԿԳ/0121/01/22 քրեական գործով Գոռ Համբարձումյանի նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-312.2-րդ հոդվածի 2-րդ մասով (համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 46-439-րդ հոդվածի 1-ին մասին) իրականացվող քրեական հետապնդումը պետք է դադարեցնել՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով՝ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով:

Ինչ վերաբերում է հնարավոր այն մեկնաբանմանը, որ վաղեմության ժամկետները պետք է հաշվել նոր ՀՀ քրեական օրենսգրքով և այն ոչ մեծ ծանրության հանցանքի համար անցած կհամարվի հանցանքը կատարելուց 5 տարի անց, ապա Դատարանը համակարծիք չէ այդ պնդմանը, քանի որ մասնակիորեն բարելավող և մասնակիորեն վարթարացնող օրենքը հետադարձ ուժ ունի միայն բարելավող մասով:

Ավելին՝ հարկ է նկատել այն հանգամանքը, որ հետադարձ ուժ է տրվում բացառապես նոր օրենսգրքով նախատեսված պարթին, այսինքն՝ համարվում է, որ ենթադրաբար կատարված հանցանքների համար նախատեսված առավել խիստ պարիժը հանդիսանում է 2 տարի ժամկետով ազատազրկումը, իսկ մյուս բոլոր հարցերը շարունակվում են լուծվել արարքի կատարման պահին գործող օրենքով, ինչպես որ սահմանված է ՀՀ քրեական օրենսգրքով:

Այլ կերպ ասած՝ Դատարանը գրնում է, որ անձի նկատմամբ կիրառվում է բացառապես իր կողմից կատարված արարքի պահին գործող օրենքը՝ իր բոլոր կարգավորումներով հանդերձ: Միաժամանակ նոր օրենսդրությանը հետադարձ ուժ է տրվում ոչ թե ամբողջությամբ, այլ յուրաքանչյուր դրույթ առանձին-առանձին: Եվ այն դրույթը, որը բարելավում է անձի վիճակը, այդ մասով կիրառվում է նոր

օրենսդրությունը, իսկ այն դրույթները, որոնք արարքի կատարման պահին գործող օրենքի համեմատ ավելի վարթարացնում են անձի վիճակը կամ ըստ էության որևէ փոփոխության չեն ենթարկվում, ապա դրանց հետադարձ ուժ չի տրվում, և բացի բարելավող դրույթից, մյուս բոլոր հարցերը շարունակվում են լուծվել արարքի կատարման պահին գործող օրենքով:

Տվյալ դեպքում վաղեմության ժամկետը ոչ մեծ ծանրության հանցագործության համար 5 տարի սահմանելը հանդիսանում է անձի վիճակն այլ կերպ վարթարացնող և չի կարող կիրառելի համարվել մինչ այդ նորմն ուժի մեջ մտնելը հանցանք կատարած անձի նկատմամբ:

Դատարանի դիրքորոշումը բխում է ինչպես ենթադրյալ հանցանքները կատարելու պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքի այն նորմից, որ հետադարձ ուժ ունի նաև հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը, այնպես էլ 2022 թվականի հուլիսի 1-ից գործող ՀՀ քրեական օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասից, որով սահմանված է նաև, որ արարքի քրեաիրավական այլ հետևանքները՝ (ինչպիսին հանդիսանում է վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական պարասխանաարվությունից ազատելու հարցը) որոշվում են դա կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով:

Այսպես՝ արարքի կատարման ժամանակ ոչ մեծ ծանրության հանցագործության համար որպես վաղեմության ժամկետ սահմանված է եղել 2 տարի, իսկ ներկայում գործող ՀՀ քրեական օրենսգրքը այդ ժամկետը սահմանում է 5 տարի, որը նախ այլ կերպ վարթարացնում է անձի իրավական վիճակը և չի կարող կիրառվել մինչ այդ օրենքն ընդունվելը հանցանք կատարած անձի նկատմամբ, ապա նաև՝ որպես այլ քրեաիրավական հետևանք՝ ենթակա է կիրառման արարքի կատարման պահին գործող օրենքը, որը ինչպես արդեն իսկ նշվել է վաղեմության ժամկետ սահմանել է 2 տարի:

Այլ խոսքով ինչպես նախկին, այլպես էլ գործող ՀՀ քրեական օրենսգրքերով սահմանված է, որ այլ կերպ վարթարացնող օրենքը հետադարձ ուժ չունի, միաժամանակ գործող ՀՀ քրեական օրենսգրքը նախատեսում է, որ այլ կերպ բարելավող օրենքը կարող է կիրառվել եթե նախատեսված է օրենքով, չնայած նրան, որ արարքը կատարելու պահին գործող օրենքով պարպադիր հետադարձ ուժ պետք է

տրվել նաև անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքին, ինչը վկայում է, որ նոր օրենքը վարթարացնում է անձի վիճակը և վաղեմության ժամկետի հաշվարկման տեսանկյունից (ժամկետն սվելացել է) չի կարող հետադարձ ուժ ունենալ, առավել ևս այն դեպքում, երբ ներկայում գործող օրենսգրքով հստակ սահմանված է, որ արարքի հանցավորությունը, պարժելիությունը և քրեաիրավական այլ հետևանքները որոշվում են դա կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով, ինչը ևս մեկ անգամ վկայում է, որ վաղեմության ժամկետը, որպես քրեաիրավական այլ հետևանք, ենթակա է հաշվարկման այն կատարելու ժամանակ գործող օրենքով, եթե նոր օրենսգրքով անձի վիճակը չի բարելավվել:

Այսպիսով՝ Դատարանն արձանագրում է, որ քրեական հետապնդման վաղեմության ժամկետների հաշվարկը նոր օրենսդրությամբ հաշվարկելու պայմաններում հետադարձ ուժ կրթվի անձի վիճակն այլ կերպ վարթարացող օրենքին: (...)»²:

8. Վերաքննիչ դատարանի 2024 թվականի ապրիլի 25-ի որոշման համաձայն՝ «(...) Վերաքննիչ դատարանը նախ հարկ է համարում նշել, որ 2021 թվականին ընդունված քրեական օրենսգրքի 439-րդ հոդվածով սահմանված ապօրինի վարձարրություն տալու հանցակազմի պարագայում օրենսդիրը, որպես այդ հանցանքը որակյալ դարձնող հանգամանքներ դիտարկելով «խոշոր չափը» և «առանձնապես խոշոր չափը», միևնույն ժամանակ, օրենսգրքի հարուկ մասում չի նախատեսել, թե ինդրո առարկա հանցակազմի առարկայի ո՞ր չափն է համարվում խոշոր, ո՞րը՝ առանձնապես խոշոր: Դրա հետ մեկտեղ հարկ է փաստել, որ նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետում օրենսդիրը սահմանել է հափշտակության, պարճատած գույքային վնասի կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված կամ սրացված գույքի կամ օգուրի չափերը, ինչից, սակայն, հետևում է, որ սահմանված այդ չափերը վերաբերելի չեն ապօրինի վարճարրություն տալու հանցակազմին, քանի որ «հանցավոր ճանապարհով ձեռք բերված կամ սրացված գույք կամ օգուրի չափ» եզրույթը որևէ կերպ չի կարող նույնացվել ապօրինի վարճարրություն տալու դեպքում այդ առարկայի չափի հետ: Այլ

² Տե՛ս նույնը, հատոր 1-ին, թերթեր 138-143:

կերպ՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ քննարկվող նորմը չի սահմանել ապօրինի վարձատրություն տալու հանցակազմի առարկայի չափը:

Վերոգրյալի հետ մեկտեղ Վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով Վճարել դատարանի ձևավորած և մեջբերված նախադեպային իրավական դիրքորոշումները, հարկ է համարում նշել, որ տվյալ դեպքում առկա օրենսդրական բացը չի կարող վերացվել, հաղթահարվել կամ լրացվել դատական մեկնաբանման միջոցով, քանի որ օրինականության սկզբունքի անքակտելի տարրն է քրեական օրենքը տարածական մեկնաբանելու և անսալոգիայով կիրառելու արգելքը: Ընդ որում, պետք է փաստել, որ 2021 թվականին ընդունված քրեական օրենսգրքի 4-րդ հոդվածի 3-րդ մասը ուղղակիորեն արգելում է քրեական օրենքի ընդհանուր մասի նորմերի անսալոգիայով կիրառումը, եթե դա վարթարացնում է անձի վիճակը:

Այսպիսով, հաշվի առնելով այն, որ «խոշոր չափ» և «առանձնապես խոշոր չափ» հասկացություններն ինքնին ենթադրում են չափելի երևույթներ, և դրանք, օգտագործվելով քանակի, կշռի կամ արժեքի հարկանիշներով օժտված առարկաները բնութագրելիս, պայմանավորված չեն գործի կոնկրետ հանգամանքներով և օրելիվորեն կարող են սահմանվել դրանցից վերացարկված, նկատի ունենալով նաև, որ քրեական օրենքի տարածական մեկնաբանումը և ընդհանուր մասի նորմերի՝ անձի վիճակի վարթարացման դեպքում անսալոգիայով կիրառելը անթույլատրելի է՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ 2021 թվականին ընդունված քրեական օրենսգրքի 439-րդ հոդվածի իմաստով «խոշոր չափ» և «առանձնապես խոշոր չափ» հասկացությունների բովանդակությունը նույն օրենսգրքի ընդհանուր կամ հատուկ մասում սահմանված չլինելը օրենսդրական բաց է, որի հետևանքով հիշյալ օրենսգրքի 439-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը և 3-րդ մասի 2-րդ կետը չեն համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին (բավարար չափով կանխատեսելի չեն), հետևաբար նաև դրանք անձին մեղադրելու հիմք չեն:

(...) Հիմք ընդունելով վերոշարադրյալը, և այդ համարեքստում նկատի ունենալով նաև 2021 թվականին ընդունված քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածի 2-րդ մասը, նույն օրենսգրքի 439-րդ հոդվածով սահմանված ապօրինի վարձատրություն տալու հանցակազմի իմաստով «խոշոր չափ» և «առանձնապես խոշոր չափ» եզրույթների վերաբերյալ նախորդ կետում արված վերլուծությունը, Վերաքննիչ դատարանը

փաստում է, որ տվյալ դեպքում Առաջին արյանը դատարանը Գոռ Համբարձումյանին մեղաազրված արարքը համապատասխանեցնելով գործող քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով սահմանված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 46-439-րդ հոդվածի 1-ին մասի հարկանիշներին, իրավացիորեն դրա վերատրակման արդյունքում հերադարձ ուժ է տվել պարիժը մեղմացնող օրենսդրությանը՝ դրանով իսկ ավելի բարենպաստ պայմաններ սրելով ամբաստանյալ Գոռ Համբարձումյանի համար:

Վերաքննիչ դատարանի վերջին դիրքորոշումը պայմանավորված է այն հանգամանքով, որ պարիժը մեղմացնող օրենք պետք է համարել ոչ միայն այն օրենքը, որը փոփոխում է Հայրուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված պարիժը, այլ նաև այն դեպքերում, երբ հանցակազմում տեղի են ունենում այնպիսի փոփոխություններ, երբ դրանց արդյունքում հանցակազմի մասի փոփոխության հերևանքով արարքը որակվում է նշված հանցակազմի այն մասով, որի սանկցիան ավելի մեղմ է: Այսինքն՝ պարիժը մեղմացնող է նաև այն օրենքը, որի համաձայն նախկինում ամբաստանյալի կատարած արարքը կոնկրետ հանցակազմի՝ ավելի խիստ պարիժ նախատեսող մասով որակելու փոխարեն պետք է որակվի ավելի մեղմ պարիժ նախատեսող մասով: Ինչ վերաբերում է այլ կերպ բարելավող օրենքին, ապա այդպիսի օրենք է համարվում այն օրենքը, որի կիրառման դեպքում անձի նկատմամբ նշանակվող պարժի փոփոխությունն տեղի չի ունենում, սակայն առկա են լինում հանցանք կատարած անձի վիճակի վրա ազդող որոշակի փոփոխություններ:

(...) Անդրադառնալով՝ վաղեմության ժամկետների և դրանց հաշվարկման կարգի վերաբերյալ բողոքում բերված փաստարկներին՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է հետևյալը. (...)

(...) 2003 և 2021 թվականներին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքերի համապատասխանաբար 75-րդ և 83-րդ հոդվածների համեմատախրավական վերլուծությունը վկայում է, որ 2021 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքը քրեական պատասխանատվությունից ազատելու վաղեմության ժամկետների մասով տվյալ դեպքում անձի վիճակը վարթարացող օրենք է և կիրառելի չէ մեղադրյալ Գ.Համբարձումյանի նկատմամբ, քանի որ նախ՝ սահմանում է վաղեմության ավելի երկար ժամկետներ, բացի այդ, վաղեմության ժամկետը, ի տարբերություն 2003 թվականին սպրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի, հաշվարկվում է մինչև

անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշում կայացնելը: Այսպես.

Գոռ Համբարձումյանին վերագրվում է արարք, որը կատարվել է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի գործողության ժամանակ և վերջինիս վերագրվող արարքը համապատասխանում է 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 439-րդ հոդվածի 1-ին մասին, որով նախատեսված պարժարեսակ է նաև ազատագրվումը՝ առավելագույնը երկու տարի ժամկետով: Այսինքն, Գոռ Համբարձումյանին ՀՀ քրեական օրենսգրքի 439-րդ հոդվածի 1-ին մասով վերագրվող արարքը դասվում է ոչ մեծ ծանրության հանցանքների շարքին:

2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 439-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը դասվում է ոչ մեծ ծանրության հանցանքների շարքին, որի համար քրեական պատասխանատվությունից ազատելու վաղեմության ժամկետը նույն օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն 5 տարի է, ինչը մեղադրյալի համար առավել խիստ և անբարենպաստ կարգավորում է, քան 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի ոչ մեծ ծանրության հանցանքների համար քրեական պատասխանատվությունից ազատելու վաղեմության ժամկետը, որը համաձայն այդ օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ 2 տարի է:

Այսինքն, 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 439-րդ հոդվածի 1-ին մասը՝ պարիժը մեղմացնելու առումով հանդիսանում է պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող, միաժամանակ այդ արարքի համար քրեական պատասխանատվությունից ազատելու վաղեմության ժամկետի առումով՝ նույն օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հետ փոխկապակցվածությամբ, պատասխանատվությունը մասնակիորեն խստացնող օրենք, հերևարար, 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածի 6-րդ մասով ձևակերպված՝ «նույն հոդվածով նախատեսված չափանիշներին համապատասխան» (այսինքն, մեղմացնող մասով կիրառելով այդ հոդվածի 2-րդ մասով, իսկ խստացնող մասով այդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգավորումները) պայմանի կիրառմամբ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ

քրեական օրենսգրքի 439-րդ հոդվածի 1-ին մասը հետադարձ ուժ ունի միայն այն մասով, որով մեղմացնում է պարասխանաբարությունը:

Ընդ որում, Վերաքննիչ դատարանը վերոնշյալ դատողություններին հանգելիս հաշվի է առնում նաև Վճարել դատարանի 2023 թվականի նոյեմբերի 10-ի՝ Միշա Մուրադյանի վերաբերյալ թիվ ԵԴ/1424/01/21 որոշման փաստաթուղթը առ այն, որ պարժի ինստիտուտը հանդիսանում է ավելի մեծ ինստիտուտի, այն է՝ քրեական պարասխանաբարության, բաղադրարար:

Այսպիսով, նկատի ունենալով այն հանգամանքը, որ մեղադրյալ Գոռ Համբարձումյանին վերագրված արարքը համապարասխանում է 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 439-րդ հոդվածի 1-ին մասին, որը դասվում է ոչ մեծ ծանրության հանցագործությունների շարքին և որի համար քրեական պարասխանաբարությունից ազատելու վաղեմության ժամկետը 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն 2 տարի է՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Դատարանը, Գոռ Համբարձումյանին վերագրված արարքի համար քրեական պարասխանաբարությունից ազատելու վաղեմության ժամկետի հաշվարկման մասով առաջնորդվելով ենթադրյալ հանցավոր արարքը կատարելու պահին գործող՝ 2003 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի դրույթներով, գործել է իրավաչափ: (...))»³:

Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

9. Սույն գործով Վճարել դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ են արդյոք ստորադաս դատարանների հետևություններն առ այն, որ մեղադրյալ Գ. Համբարձումյանին մեղսագրվող արարքը համապատասխանում է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 46-439-րդ հոդվածի 1-ին մասին:

10. ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չի կարող դատապարտվել այնպիսի գործողության կամ անգործության համար, որը կատարման

³ Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 44-48:

պահին հանցագործություն չի հանդիսացել: Չի կարող նշանակվել ավելի ծանր պարիժ, քան այն, որը ենթակա էր կիրառման հանցանք կատարելու պահին: Արարքի պարժեղությունը վերացնող կամ պարիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի համաձայն՝

«Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, հանցագործություն չի համարվել: (...):»

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 4-րդ հոդվածի համաձայն՝

«1. Ոչ ոք չի կարող ենթարկվել քրեական պարասխանատվության այն արարքի համար, որը կատարման պահին հանցանք չի համարվել:

2. Քրեական օրենքի Հատուկ մասի նորմերն անսլոգիայով կիրառելն արգելվում է:

3. Քրեական օրենքի Ընդհանուր մասի նորմերը կարող են անսլոգիայով կիրառվել, եթե դա չի վարթարացնում անձի վիճակը»:

10.1 Մեջբերված նորմերը Վճռաբեկ դատարանը բազմիցս վերլուծության է ենթարկել իր նախադեպային որոշումների շրջանակներում՝ ընդգծելով, որ «*չկա հանցագործություն և պարիժ, եթե այն սահմանված չէ օրենքով*» (*nullum crimen, nulla poena sine lege*) կանոնը համընդհանուր ճանաչում ստացած հիմնարար սկզբունք է և իրավունքի գերակայության կարևորագույն տարր, որը բացարձակ նշանակություն ունի մարդու իրավունքների պաշտպանության համակարգում, հետևաբար նշված սկզբունքից որևէ շեղում անթույլատրելի է: Արարքի հանցավորությունն ու պատժելիությունը պետք է նախատեսված լինեն **իրավական որոշակիության չափանիշին բավարարող օրենքով**, ինչը ենթադրում է, որ անձը համապատասխան դրույթի տառացի ընկալումից և, անհրաժեշտության դեպքում, դրա կապակցությամբ դատարանների տված մեկնաբանությունից պետք է հասկանա, թե որ գործողությունների և անգործության համար է քրեական պատասխանատվություն

նախատեսվում և ինչ պատիժ կնշանակվի այդ գործողությունների կատարման և/կամ անգործության համար⁴:

Անդրադառնալով դատական մեկնաբանության սահմաններին և օրենսդրական բացի հաղթահարման հիմնախնդրին՝ Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ օրենքի՝ իրավական որոշակիության չափանիշին բավարարելն առաջին հերթին օրենսդրական կարգավորման խնդիր է, իսկ *դատական մեկնաբանումը լրացնող դերակատարություն ունի*: ՀՀ քրեական օրենսգրքի որևէ նորմում առկա *օրենսդրական բացը չի կարող վերացվել, հաղթահարվել կամ լրացվել դատական մեկնաբանման միջոցով, քանի որ օրինականության սկզբունքի անբակտերի տարրն է քրեական օրենքը փարածական մեկնաբանելու և անսպորտաբար կիրառելու արգելքը*:

Վերոնշյալի համատեքստում Վճռաբեկ դատարանը նշել է, որ եթե հանցակազմի պարտադիր հատկանիշը սահմանող հասկացության բովանդակության *բացահայտումը կախված չէ գործի կոնկրետ հանգամանքներից, կարող է սահմանվել դրանցից վերացարկված, սակայն սահմանված չէ օրենքով, դատարանը, չունենալով գնահատման օբյեկտիվ չափանիշներ, զրկված է դրանք մեկնաբանելու հնարավորությունից*: «Խոշոր չափ» և «առանձնապես խոշոր չափ» հասկացություններն ինքնին ենթադրում են չափելի երևույթներ: Դրանք, օգտագործվելով քանակի, կշռի կամ արժեքի հատկանիշներով օժտված առարկաները բնութագրելիս, պայմանավորված չեն գործի կոնկրետ հանգամանքներով և օբյեկտիվորեն կարող են սահմանվել (և սահմանվում են) դրանցից վերացարկված: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի մի շարք նորմերում օգտագործվելով «խոշոր չափ» և/ կամ «առանձնապես խոշոր չափ» եզրույթները՝ օրենսդիրը միաժամանակ հստակ սահմանել է, թե կոնկրետ առարկայի որ չափն է համարվում խոշոր, որը՝ առանձնապես խոշոր: Հակառակ դեպքում իրավակիրառ մարմնի կողմից քննարկվող հասկացությունների կիրառումը կհանգեցնի կամայական մեղադրման, դատապարտման և պատժման, քանի որ գործի հանգամանքներով պայմանավորված չլինելու դեպքում բացակայում են իրավակիրառ

⁴ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Վարուժան Ավետիսյանի գործով 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ՍԴՅ/0013/01/11, Դավիթ Սիմիդյանի գործով 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԵԷԴ/0122/01/13, Վարդան Ղազարյանի գործով 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԱՎԴ/0002/01/14 որոշումները:

մարմնի, այդ թվում՝ դատարանի կողմից այդ հասկացությունների բովանդակությունը որոշելու օբյեկտիվ չափանիշները⁵:

11. ՀՀ գործող քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝

«1. Սույն օրենսգրքում օգտագործվում են հետևյալ հասկացությունները.

(...)

17) *հափշտակության, պատրճառած գույքային վնասի կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված կամ սրացված գույքի կամ օգուրի չափերը՝ սույն օրենսգրքում հափշտակված գույքի, պատրճառված գույքային վնասի, հանցավոր ճանապարհով ձեռք բերված կամ սրացված գույքի կամ օգուրի մանր չափ է համարվում 500.000 Հայաստանի Հանրապետության դրամը չգերազանցող գումարը (արժեքը), խոշոր չափ է համարվում 5 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը չգերազանցող գումարը (արժեքը), առանձնապես խոշոր չափ է համարվում 5 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող գումարը (արժեքը), բացառությամբ սույն օրենսգրքի Հարուկ մասով նախատեսված դեպքերի. (...)*»:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 439-րդ հոդվածի համաձայն՝

«Պաշտոնատար անձի նկատմամբ ունեցած ազդեցությունն օգտագործելու նպատակով ապօրինի վարձարրություն փայլը՝ պաշտոնատար անձի նկատմամբ իրական կամ ենթադրյալ ազդեցություն ունեցող անձին կամ նրա մատրնանշած անձին, այդ ազդեցությունն օգտագործելու նպատակով անձամբ կամ միջնորդի միջոցով նրա կամ այլ անձի համար գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որևէ այլ առավելություն առաջարկելը, խոստանալը կամ փրամադրելը՝ վարձարրություն փոխողի կամ նրա մատրնանշած անձի օգրին պաշտոնատար անձի կողմից իր իշխանական կամ ծառայողական լիազորությունների կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով գործողություն կատարելու կամ չկատարելու համար՝

(...)

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

(...)

⁵ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Դավիթ Միմիդյանի* գործով 2014 թվականի դեկտեմբերի 16-ին կայացված թիվ ԵԷԴ/0122/01/13 որոշումը:

2) *խոշոր չափերով կամ*

(...)»:

12. Ի տարբերություն ՀՀ նախկին քրեական օրենսգրքի՝ ՀՀ գործող քրեական օրենսգրքով հափշտակության, պատճառված գույքային վնասի կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված կամ ստացված գույքի կամ օգուտի չափերը սահմանվում են ՀՀ գործող քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածով՝ օրենսգրքում օգտագործվող հիմնական հասկացությունների ներքո: Վերոնշյալ չափերը ընդհանուր են ՀՀ գործող քրեական օրենսգրքի հատուկ մասով սահմանված բոլոր այն հանցակազմերի համար, որոնցում հանցագործության չափերը նախատեսված են որպես հանցակազմի պարտադիր հատկանիշ կամ հանցակազմը որակյալ կամ առավել որակյալ դարձնող հանգամանք, եթե կոնկրետ հանցակազմի շրջանակում այլ չափ սահմանված չէ (օրինակ՝ ՀՀ գործող քրեական օրենսգրքի հոդվածներ 267-ը, 282-ը, 290-ը և այլն):

12.1. Վճռաբեկ դատարանը, *Սարգիս Գրիգորյանի* վերաբերյալ գործով որոշմամբ անդրադառնալով ՀՀ գործող քրեական օրենսգրքում կաշառք տալու հանցակազմի որպես ծանրացնող և առավել ծանրացնող հանգամանք նախատեսված խոշոր և առանձնապես խոշոր չափերով կատարված արարքին քրեափրավական գնահատական տալու հարցին, արձանագրել է, որ «խոշոր» և «առանձնապես խոշոր» չափ հասկացությունների պարագայում գործ ունենք չափելի երևույթների հետ, ուստի օրենսդիրը կա՛մ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի շրջանակներում՝ ընդհանուր հասկացությունների ներքո, կա՛մ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածով պետք է հստակ սահմաններ, թե կաշառք տալու հանցակազմի պարագայում որ չափն է համարվում խոշոր, որը՝ առանձնապես խոշոր, մինչդեռ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 17-րդ կետում խոսքը գնում է միայն հափշտակության, պատճառված գույքային վնասի, հանցավոր ճանապարհով ձեռք բերված կամ ստացված գույքի կամ օգուտի չափերի մասին, իսկ կաշառք տալու դեպքում կաշառքի առարկայի չափերը չեն կարող նույնացվել դրանցից որևէ մեկի հետ:

Անդրադառնալով հնարավոր այն մեկնաբանությանը, որ կաշառք տալու չափերը կարող են դիտարկվել հանցավոր ճանապարհով ձեռք բերված կամ ստացված գույքի կամ օգուտի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ նման մեկնաբանումը կլինի խիստ տարածական և չի համապատասխանի օրենքի որոշակիության չափանիշներին,

քանի որ վերոնշյալ դեպքում խոսքը գնում է գույքը կամ օգուտը հանցավոր ճանապարհով ձեռք բերելու կամ ստանալու, այլ ոչ թե տալու մասին: Ուստի Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի իմաստով «խոշոր չափ» և «առանձնապես խոշոր չափ» հասկացություններն օրենսդրորեն բացահայտված չեն, և առկա է օրենսդրական բաց, ինչը որևէ պարագայում չի կարող լրացվել կամ հաղթահարվել դատական մեկնաբանության միջոցով⁶:

12.2. Վճռաբեկ դատարանը, նախորդ կետում վկայակոչված իրավական դիրքորոշումների լույսի ներքո, *Միհրդասր Մաթևոսյանի* վերաբերյալ գործով որոշմամբ անդրադառնալով ՀՀ գործող քրեական օրենսգրքի 439-րդ հոդվածով նախատեսված արարքի՝ «խոշոր» և «առանձնապես խոշոր» չափերով կատարելու որակյալ հատկանիշներին, արձանագրել է, որ օրենսդրի կողմից ՀՀ գործող քրեական օրենսգրքի 439-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի առարկայի խոշոր ու առանձնապես խոշոր չափերը չեն բացահայտվել, և որ տվյալ դեպքում առկա է օրենսդրական բաց, ինչը որևէ պարագայում չի կարող լրացվել կամ հաղթահարվել դատական մեկնաբանության միջոցով⁷:

Վերահաստատելով վերը նշված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դատական մեկնաբանման շրջանակները խստորեն սահմանափակված են օրինականության սկզբունքով, իսկ օրինականության սկզբունքի անքակտելի տարրն է քրեական օրենքը տարածական մեկնաբանելու և դրա նորմերը հատկապես ի վնաս անձի անալոգիայով կիրառելու արգելքը:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ

- Գ.Համբարձումյանին մեղադրանք է ներկայացվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 38-312.2-րդ հոդվածի 2-րդ մասով այն արարքի համար, որ նա 2022 թվականի փետրվարի 23-ին օժանդակել է իր ազգական Թաթուլ Գևորգյանի կողմից ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի հետ մտերիմ հարաբերությունների մեջ

⁶ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Մարգիս Գրիգորյանի* գործով 2024 թվականի հուլիսի 26-ի թիվ ՀԿԴ/0054/01/22 որոշման 11.1-12-րդ կետերը:

⁷ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Միհրդասր Մաթևոսյանի* գործով 2024 թվականի օգոստոսի 26-ի թիվ ՀԿԴ/0121/01/22 որոշման 14-րդ կետը:

գտնվող Վիգեն Գրիգորյանին՝ վերջինիս իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու համար խոշոր չափերով ապօրինի վարձատրություն տալուն⁸,

- Առաջին ատյանի դատարանը փաստել է, որ Գ.Համբարձումյանին վերագրվող արարքը ենթադրաբար կատարվել է ՀՀ նախկին քրեական օրենսգրքի գործողության ժամանակ և համապատասխանել է առանձնապես խոշոր չափերով ապօրինի վարձատրություն տալուն: Միևնույն ժամանակ, ՀՀ գործող քրեական օրենսգրքի 439-րդ հոդվածով ապօրինի վարձատրություն տալու հանցակազմի խոշոր և առանձնապես խոշոր չափերը սահմանված չեն, հետևաբար ապօրինի վարձատրություն տալու ցանկացած դեպքում, անկախ վարձատրության առարկայի չափից, հանցակազմը որակյալ դարձնող մյուս պայմանների բացակայության պայմաններում, արարքը պետք է որակվի որպես հասարակ հանցակազմով կատարված: Արդյունքում՝ Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ Գ.Համբարձումյանին մեղսագրվող արարքը համապատասխանում է ոչ թե ՀՀ գործող քրեական օրենսգրքի 439-րդ հոդվածի 2-րդ մասին, այլ՝ նույն հոդվածի 1-ին մասին⁹,

- Վերաքննիչ դատարանը, ըստ էության, համաձայնել է Առաջին ատյանի դատարանի դատողությունների հետ¹⁰:

14. Սույն որոշման նախորդ կետում շարադրված փաստերը գնահատելով սույն որոշման 10-12.2-րդ կետերում մեջբերված նորմերի և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 439-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, բավարար չափով կանխատեսելի չէ, ուստի չի կարող անձին դատապարտելու հիմք լինել:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների հետևություններն առ այն, որ ամբաստանյալ Գ.Համբարձումյանին մեղսագրվող արարքը համապատասխանում է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 439-րդ հոդվածի 1-ին մասին, իրավաչափ են:

⁸ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

⁹ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

¹⁰ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

Անդրադառնալով բողոքաբերի այն փաստարկներին, որ «*[Մ]տորադաս դատարանները սխալ են մեկնաբանել ՀՀ գործող քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի կարգավորումները՝ անտեսելով քննարկվող նորմը դրա ընդունող մարմնի կողմից հետապնդվող նպատակի համարեքսպրում մեկնաբանելու պահանջը*», Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ օրինականության սկզբունքը և «չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» կանոնը պահանջում են, որ հանցավոր համարվող արարքները սահմանվեն բացառապես օրենքով և նկարագրվեն իրավական որոշակիության չափանիշին բավարարող եղանակով՝ բացառելով դրանց շատ լայն և տարածական մեկնաբանումը: Վերոնշյալը սահմանադրորեն և միջազգային կոնվենցիաներով ամրագրված հիմնարար սկզբունք է և բացարձակ նշանակություն ունի մարդու իրավունքների պաշտպանության համակարգում, որից որևէ շեղում և բացառություն նախատեսված չէ՝ նույնիսկ պատերազմի կամ ազգի կյանքին սպառնացող այլ արտակարգ դրության ժամանակ¹¹: Հետևաբար, եթե քրեաիրավական նորմը չի բավարարում «օրենքին» ներկայացվող որակական չափանիշներին, այն չի կարող դրվել անձի դատապարտման հիմքում, որքան էլ որ կատարված արարքը լինի վտանգավոր և, ընդհանուր առմամբ, բխի օրենսդրի նպատակներից:

15. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ են արդյոք ստորադաս դատարանների հետևությունները՝ Գ.Համբարձումյանի նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով դադարեցնելու վերաբերյալ:

16. ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի համաձայն՝ «*Ոչ ոք չի կարող դատապարտվել այնպիսի գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին հանցագործություն չի հանդիսացել: Չի կարող նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը ենթակա էր կիրառման հանցանք կատարելու պահին: Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ*»:

¹¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *C.R. v. THE UNITED KINGDOM* գործով 1995 թվականի նոյեմբերի 22-ի վճիռը, գանգատ թիվ 20190/92, §32, *S.W. v. THE UNITED KINGDOM* գործով 1995 թվականի նոյեմբերի 22-ի վճիռը, գանգատ թիվ 20166/92, §34:

ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի համաձայն՝ «1. Անձի իրավական վիճակը վարթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:

2. Անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով»:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ «1. Արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարած անձի վիճակն այլ կերպ վարթարացնող օրենսդրությունը հետադարձ ուժ չունի:

2. Արարքի հանցավորությունը լրիվ կամ մասնակիորեն վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենսդրությունն ունի հետադարձ ուժ: Նշված դեպքում այն փարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարած այն անձանց վրա, որոնց վերաբերյալ դեռևս առկա չէ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատավարական ակտ:

(...)

4. Հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենսդրությունն ունի հետադարձ ուժ, եթե դա նախատեսված է օրենքով:

(...)

6. Պատրաստանալությունը մասնակիորեն մեղմացնող և միաժամանակ մասնակիորեն խստացնող օրենքը սույն հոդվածով նախատեսված չափանիշներին համապատասխան հետադարձ ուժ ունի միայն այն մասով, որը մեղմացնում է պատրաստանալությունը»:

ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 312.2-րդ հոդվածի համաձայն՝ «1. Անձին նրա իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու համար սպորինի վարձարրություն փախը, այսինքն՝ անձին անձամբ կամ միջնորդի միջոցով նրա կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն խոստանալը կամ առաջարկելը կամ փրամադրելը իր կամ իր ներկայացրած անձանց օգտին որևէ պաշտոնատար անձի կամ պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային պաշտոն զբաղեցնող անձի, հանրային ծառայողի կողմից իր

լիազորությունների շրջանակում որևէ գործողություն կատարելուն կամ չկատարելուն նպատակելու կամ ծառայության գծով հովանավորչության կամ թողություն համար՝

պատժվում է տուգանքով նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Այօրինի վարձարրություն տալը, որը կատարվել է խոշոր չափերով

պատժվում է տուգանքով նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից վեցհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:

(...)»:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 439-րդ հոդվածի համաձայն՝ «1. Պաշտոնատար անձի նկատմամբ ունեցած ազդեցությունն օգտագործելու նպատակով այօրինի վարձարրություն տալը՝ պաշտոնատար անձի նկատմամբ իրական կամ ենթադրյալ ազդեցություն ունեցող անձին կամ նրա մատնանշած անձին, այդ ազդեցությունն օգտագործելու նպատակով անձամբ կամ միջնորդի միջոցով նրա կամ այլ անձի համար գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որևէ այլ առավելություն առաջարկելը, խոստանալը կամ տրամադրելը՝ վարձարրություն փոխելու կամ նրա մատնանշած անձի օգտին պաշտոնատար անձի կողմից իր իշխանական կամ ծառայողական լիազորությունների կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով գործողություն կատարելու կամ չկատարելու համար՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

(...)»:

ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն՝ «(...) 2. Ոչ մեծ ծանրության հանցագործություններ են համարվում դիտավորյալմբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում երկու տարի ժամկետով ազատազրկումը, կամ որոնց համար

նախատեսված է ազատագրկման հետ կապ չունեցող պատիժ, ինչպես նաև անզգուշությամբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում երեք տարի ժամկետով ազատագրկումը:

3. Միջին ծանրության հանցագործություններ են համարվում դիրավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում հինգ տարի ժամկետով ազատագրկումը, ինչպես նաև անզգուշությամբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում տասը տարի ժամկետով ազատագրկումը:

(...)»:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝ «(...) 2. Ոչ մեծ ծանրության հանցանքներ են համարվում սույն օրենսգրքով նախատեսված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքի Հարուկ մասով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում 2 տարի ժամկետով ազատագրկումը, կամ որոնց համար նախատեսված է ազատությունից զրկելու հետ չկապված պատիժ:

3. Միջին ծանրության հանցանքներ են համարվում սույն օրենսգրքով նախատեսված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքի Հարուկ մասով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում 5 տարի ժամկետով ազատագրկումը:

(...)»:

ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի համաձայն՝ «1. Անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել են հերևյալ ժամկետները.

1) երկու տարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից.

2) հինգ տարի՝ միջին ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից.

(...)»:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտվելուն հաջորդող օրվանից անցել են հերևյալ ժամկետները.

1) 5 փարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքի դեպքում.

2) 10 փարի՝ միջին ծանրության հանցանքի դեպքում.

(...)»:

16.1. ՀՀ Սահմանադրության 72-73-րդ հոդվածներով ամրագրված երաշխիքները, որոնք նորմատիվ իրավական ակտի կիրառման սահմանադրական սկզբունք են, քրեաիրավական համակարգում առանցքային տեղ են գրավում, ինչը հատկապես ընդգծվում է այն հանգամանքով, որ փոփոխվող և զարգացող հասարակությունում կոնկրետ արարքի դեմ քրեաիրավական ներգործության նպատակահարմարությունը, դրա հանրային վտանգավորությունը կամ քրեականացված արարքը կատարած անձի իրավական վիճակը նորովի կարգավորվելու դեպքում, դատարանը՝ որպես քրեական դատավարությունում արդարադատության գործառույթով օժտված մարմին, պետք է քննարկման առարկա դարձնի օրենսդրական փոփոխության իրավական բնույթը, ըստ այդմ էլ՝ մինչ ընդունումը ծագած իրավահարաբերությունների վրա այն հետադարձությամբ տարածելու իրավական հնարավորությունը:

Հարկ է արձանագրել, որ ՀՀ Սահմանադրությամբ՝ ժամանակի մեջ իրավական ակտերի գործողության կանոնակարգումը հիմնվում է այն տրամաբանության վրա, որ իրավական ակտերի հետադարձ ուժով գործողության մերժումն ընդհանուր կանոն է, իսկ այդ ակտերի հետադարձ ուժով գործողության հնարավորությունը՝ բացառություն ընդհանուր կանոնից¹²:

Ընդ որում, բացառություններն իրենց հերթին տարբեր են. ա) երբ սահմանադիրը բացառում է որևէ հայեցողություն դրսևորելու հնարավորությունը՝ սահմանելով հետադարձության ուղիղ պահանջ, օրինակ, արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքն օժտված է անմիջական գործողությամբ և բ) երբ անձի իրավական վիճակը բարելավող իրավական ակտին հետադարձ ուժ հաղորդելու լիազորությունը թողնվում է իրավասու՝ այդ ակտն ընդունող մարմնի հայեցողությանը, օրինակ, անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը

¹² Տե՛ս, *mutatis mutandis*, ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2011 թվականի նոյեմբերի 29-ի թիվ ՍԴՆ-1000 որոշումը:

հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով¹³: Տարբերակման այս գաղափարն իր արտացոլումն է գտել նաև ՀՀ գործող քրեական օրենսգրքում. այսպես՝ օրենսգրքի 8-րդ և 9-րդ հոդվածների համադրված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արարքի հանցավորությունը լրիվ կամ մասնակիորեն վերացնող կամ պատիժը մեղմացնող նորմի համար նախատեսվում է հետադարձ ազդեցության անմիջական պահանջ, մինչդեռ անձի վիճակն այլ կերպ բարելավող դրույթի հետադարձությունը պայմանավորվում է օրենքով նախատեսված լինելու հանգամանքով¹⁴:

17. Վճռաբեկ դատարանը, *Խաչատրուր Պետրոսյանի և Հասմիկ Շանոյանի* վերաբերյալ գործով որոշմամբ անդրադառնալով քրեական օրենսդրության հետադարձությամբ կիրառման դեպքերին, արձանագրել է, որ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետի հաշվարկման տեսանկյունից քրեական նոր օրենքով անձին մեղսագրված հանցանքի տեսակի փոփոխությունն ինքնին չի կարող հետադարձ ներգործություն ունենալ, այսինքն, այս հարցի շրջանակներում օրենսդրական փոփոխությունների բարենպաստ լինելու ինքնուրույն ցուցիչ չէ, և տեղի ունեցած օրենսդրական փոփոխությունների բարենպաստ լինելու մասին կարելի է խոսել բացառապես քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը կանոնակարգող՝ ՀՀ նախկին և գործող քրեական օրենսգրքերի ընդհանուր նորմերի հետ համադրված գնահատելու պարագայում: Մինևույն ժամանակ անդրադառնալով օրենսդրական փոփոխությունների արդյունքում հանցանքի տեսակի և վաղեմության ժամկետների փոփոխության իրավիճակներին, մասնավորապես՝ այն դեպքին, երբ արարքի (հանցանքի) ծանրության աստիճանը նվազում է, իսկ այդ արարքի համար սահմանված քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը չի փոփոխվում, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդրական փոփոխության արդյունքում պատժի մեղմացման հետևանքով նախկինում **ծանր** համարվող հանցանքը միջին ծանրության հանցանք հանդիսանալու դեպքում կիրառելի է մեղմացնող օրենքին հետադարձ ուժ տալու

¹³ Տե՛ս, *mutatis mutandis*, ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2021 թվականի մարտի 26-ի թիվ ՄԴՈ-1586 որոշումը:

¹⁴ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Վանիկ Առուստամյանի* գործով 2024 թվականի փետրվարի 22-ի թիվ ԼԴ/0004/12/22 որոշումը:

կանոնը՝ հանցանքի տեսակի և պատժի մասով, այսինքն՝ արարքը պետք է որակվի ՀՀ գործող քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով: Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ անթույլատրելի է օրենքի փոփոխության արդյունքում հետադարձության կանոնների կիրառմամբ ստացված **միջին ծանրության** հանցանքի համար քրեական պատասխանատվությունից ազատելու վաղեմության ժամկետը (տասը տարին) համեմատել ՀՀ նախկին քրեական օրենսգրքով նախատեսված **միջին ծանրության** հանցանքի համար քրեական պատասխանատվությունից ազատելու վաղեմության ժամկետի (հինգ տարի) հետ: Նման համեմատությունը սկզբունքորեն չի համապատասխանի ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողության կանոնի էությանն ու նշանակությանը: Հակառակ մոտեցումը հանգեցնում է այնպիսի իրավիճակի, որ **արարքի կատարման պահին ծանր հանցագործություն համարվող արարքի** պարագայում անձի նկատմամբ կիրառվում է **արարքի կատարման պահին միջին ծանրության հանցանքի համար նախատեսված կարգավորումը**, որը որևէ պարագայում կիրառելի չէր¹⁵:

18. Նախորդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումների լույսի ներքո, Վճռաբեկ դատարանը, *Միհրդատ Մաթևոսյանի* վերաբերյալ գործով որոշմամբ անդրադառնալով ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 312.2-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքն անձին մեղսագրված լինելու դեպքին, արձանագրել է, որ իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու համար խոշոր չափերով ապօրինի վարձատրություն տալը, համաձայն ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի, դասվում էր **միջին ծանրության** հանցագործությունների շարքին, որի համար քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը հինգ տարի էր: ՀՀ գործող քրեական օրենսգրքի 439-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցավոր արարքը դասվում է **ոչ մեծ ծանրության** հանցագործությունների շարքին: Միննույն ժամանակ, օրենսդիրը ՀՀ գործող քրեական օրենսգրքի ընդհանուր մասում՝ վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատելու կարգը սահմանող 83-րդ հոդվածում սահմանել

¹⁵ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Խաչատրուր Պետրոսյանի և Հասմիկ Շանոյանի* գործով 2024 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԱԲԴ/0196/01/17 որոշումը:

է, որ **ոչ մեծ ծանրության** հանցանքի դեպքում անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտվելուն հաջորդող օրվանից անցել է հինգ տարի:

Ուստի, ստացվում է, որ պաշտոնատար անձի նկատմամբ ունեցած իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու նպատակով ապօրինի վարձատրություն տալը գործող քրեական օրենսգրքով թեև դասվել է ոչ մեծ ծանրության հանցագործությունների շարքին, սակայն **քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետի տեսանկյունից երկու օրենսդրություններն էլ ցուցաբերում են նույն մոտեցումը, ըստ որի՝ պաշտոնատար անձի նկատմամբ ունեցած իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու նպատակով ապօրինի վարձատրություն տալու մեջ մեղադրվող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե մեղսագրվող արարքի կատարման պահից անցել է հինգ տարի:** Վերոգրյալից հետևում է, որ գործող քրեական օրենսդրությամբ հանցանքի տեսակի փոփոխությունը քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետների տեսանկյունից անձի համար որևէ բարենպաստ հետևանք չի առաջացնում, քանզի վաղեմության ժամկետի առումով քրեական օրենսդրության նախկին և ներկա կարգավորումները նույնական են: Այլ խոսքով՝ պաշտոնատար անձի նկատմամբ ունեցած իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու նպատակով ապօրինի վարձատրություն տալու հանցանքի տեսակի փոփոխության հետևանքով քրեական պատասխանատվության ենթարկելու ժամկետը, նախկին օրենսգրքի համեմատ, փոփոխությունների չի ենթարկվել, ուստի, քննարկվող դեպքում, քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը ենթակա է լուծման՝ արարքի կատարման պահին գործող, ՀՀ նախկին քրեական օրենսգրքով նախատեսված միջին ծանրության հանցագործության կատարման համար քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետի հաշվառմամբ¹⁶:

19. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

¹⁶ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Միհրդատ Մաթևոսյանի գործով 2024 թվականի օգոստոսի 26-ի թիվ ՀԿԴ/0121/01/22 որոշման 18-րդ կետը:

- Գ.Համբարձումյանին մեղադրանք է ներկայացվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 38-312.2-րդ հոդվածի 2-րդ մասով այն արարքի համար, որ նա 2022 թվականի փետրվարի 23-ին օժանդակել է իր ազգական Թաթուլ Գևորգյանի կողմից ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի հետ մտերիմ հարաբերությունների մեջ գտնվող Վիգեն Գրիգորյանին՝ վերջինիս իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու համար խոշոր չափերով ապօրինի վարձատրություն տալուն¹⁷,

- Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ մեղադրյալ Գ.Համբարձումյանին մեղսագրված հանցանքը համապատասխանում է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 439-րդ հոդվածի 1-ին մասին, որը ոչ մեծ ծանրության հանցանք է: Մինևույն ժամանակ, Առաջին ատյանի դատարանը փաստել է, որ մեղադրյալի նկատմամբ պետք է կիրառվի արարքի կատարման պահին գործող ՀՀ նախկին քրեական օրենսգրքով սահմանված վաղեմության ժամկետները, ուստի քանի որ արարքը ենթադրաբար կատարվելուց հետո անցել է երկու տարուց ավել ժամանակ Գ.Համբարձումյանի նկատմամբ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 38-312.2-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցված քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով¹⁸,

- Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ 2003 և 2021 թվականներին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքերի՝ համապատասխանաբար 75-րդ և 83-րդ հոդվածների համեմատական վերլուծությունը վկայում է, որ ՀՀ գործող քրեական օրենսգիրքը քրեական պատասխանատվությունից ազատելու վաղեմության ժամկետների մասով տվյալ դեպքում անձի վիճակը վատթարացող օրենք է և կիրառելի չէ մեղադրյալ Գ.Համբարձումյանի նկատմամբ, քանի որ սահմանում է քրեական պատասխանատվությունից ազատելու վաղեմության ավելի երկար ժամկետներ: Արդյունքում, Վերաքննիչ դատարանը գտել է, որ վաղեմության ժամկետն անցնելու առումով մեղադրյալ Գ.Համբարձումյանի նկատմամբ կիրառելի են ՀՀ նախկին քրեական օրենսգրքի ոչ մեծ ծանրության հանցանքի վաղեմության ժամկետների

¹⁷ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

¹⁸ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

վերաբերյալ դրույթները, քանի որ դրանք առավել բարենպաստ են մեղադրյալի համար¹⁹:

20. Նախորդ կետում վկայակոչված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 16-18-րդ կետերում մեջբերված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև Գ.Համբարձումյանին վերագրվող հանցանքը ՀՀ գործող քրեական օրենսգրքով դասվել է ոչ մեծ ծանրության հանցանքների շարքին, սակայն նույն օրենսգրքի՝ վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատելը կանոնակարգող նորմերի համադրված վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդրական այդ փոփոխությունը Գ.Համբարձումյանի համար վաղեմության ժամկետի առումով բարենպաստ հետևանքներ չի առաջացնում, քանի որ երկու օրենսդրությունն էլ ցուցաբերում են նույն մոտեցումը. վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե մեղսագրվող արարքը կատարելուց անցել է հինգ տարի:

Մասնավորապես, կատարման պահին Գ.Համբարձումյանին վերագրվող հանցանքը եղել է միջին ծանրության, որի վաղեմության ժամկետը հինգ տարի է: ՀՀ գործող քրեական օրենսգրքին համապատասխանեցնելու արդյունքում Գ. Համբարձումյանին վերագրվող հանցանքը ոչ մեծ ծանրության է, որի վաղեմության ժամկետը կրկին հինգ տարի է: Ուստի թե՛ նախկին, թե՛ գործող քրեական օրենսդրությունները թույլ են տալիս մեղադրյալ Գ.Համբարձումյանին վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով ազատել քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտվելու օրվանից անցել է հինգ տարի:

21. Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների հետևությունն առ այն, որ Գ.Համբարձումյանին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու հիմքով վերջինիս քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը լուծելիս վաղեմության ժամկետը ենթակա է հաշվարկման արարքի կատարման պահին գործող՝

¹⁹ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

ոչ մեծ ծանրության հանցագործությունների վաղեմության ժամկետի հաշվարկման կանոնով, իրավաչափ չէ:

22. Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի կողմից *Միշա Մուրադյանի* գործով արձանագրված իրավական դիրքորոշումները վկայակոչելուն, ապա Վճռաբեկ դատարանն այն հիմնավոր չի համարում, քանի որ, ինչպես հետևում է սույն որոշման նախորդ կետերում արձանագրվածից, քննարկվող իրավիճակում առկա չէ քրեական պատասխանատվության մեղմացման կամ վերացման հարց, ուստի *Միշա Մուրադյանի* գործով արտահայտված իրավական դիրքորոշումները²⁰ չեն կարող կիրառելի լինել սույն դեպքում:

23. Անփոփելիվ վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարույթով ստորադաս դատարանները թույլ են տվել նյութական օրենքի ոչ ճիշտ կիրառում, այն է՝ կիրառել են 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, որը սույն վարույթով ենթակա չէր կիրառման, ինչը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 362-րդ հոդվածի, հիմք է Առաջին ատյանի դատարանի 2024 թվականի մարտի 1-ի որոշումը և այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի 2024 թվականի ապրիլի 25-ի որոշումը բեկանելու համար:

24. Հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրյալ Գ. Համբարձումյանի պաշտպան Գ. Մարգարյանի միջնորդությունը պետք է մերժել:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, պետք է ըստ էության քննության առնի Գ. Համբարձումյանի վերաբերյալ քրեական գործը և արդյունքում հանգի համապատասխան հետևության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ, 33-րդ, 34-րդ, 264-րդ, 281-րդ, 352-րդ, 359-րդ, 361-363-րդ ու 400-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

²⁰ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Միշա Մուրադյանի* գործով 2023 թվականի նոյեմբերի 10-ի թիվ ԵԴ/1424/01/21 որոշման 16-20-րդ կետերը:

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ ՀԿԴ/0121/01/22 քրեական գործով Գոռ Մանվելի Համբարձումյանի վերաբերյալ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 2024 թվականի մարտի 1-ի որոշումը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի՝ 2024 թվականի ապրիլի 25-ի որոշումը բեկանել և պաշտպան Գ. Մարգարյանի միջնորդությունը մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

Նախագահող՝ _____ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ա.ԿՐԿՑԱՇԱՐՅԱՆ

_____ Ռ.ՄԽԻԹԱՐՅԱՆ